ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 04 հոկտեմբերի 2016թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Վ.Մելքոնյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Ա.Կիրակոսյան, Կ.Քարտաշյան,
Հանձնաժողովի բացող անդամներ՝	Լ.Մարկոսյան, Լ.Առաքելյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն.Մկրտչյան:

1. «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման, արդյունքների հաստատման/ընթացակարգի արդյունքների ամփոփման/մասին.

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 23.09.2016թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, որտեղ գրանցված են «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի միջոցով էլեկտրոնային ձևով ընթացակարգի բոլոր հնարավոր մասնակիցները, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2016 թվականի հոկտեմբերի 04-ին, Ժամը՝ 11:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

1.3 Հայտ է ներկայացրել մեկ մասնակից.

Մասնակցի անվանումը	**Հայտերի գնահատման արդյունքները /համապատասխանելու դեպքում նշել "X"/**
«ՏԻՏԱՆ-ՕՊՏԻՄՈՒՄ» ՍՊԸ	

1.4 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2016թ. ընթացքում անշարժ գույքի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով պարզեցված ընթացակարգի միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում **հանձնաժողովը որոշեց՝**

1.4.1 «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՏԻՏԱՆ-ՕՊՏԻՄՈՒՄ» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ Մասնակիցը բոլոր փաստաթղթերը ներկայացրել է առանց էլեկտրոնային թվային ստորագրության՝ ինչը ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի 168-Ն որոշմամբ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 9)-րդ ենթակետի խախտում է:

1.4.2 «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 35-րդ հոդվածի 1-ին կետի 1) ենթակետի համաձայն:

1.4.3 Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի ապահովել «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հաշվետվության հրապարակումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.
Նախագահ՝ ---------- Վ.Մելքոնյան

Քարտուղար՝ ---------- Ն.Մկրտչյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Ա.Կիրակոսյան

2. ---------- Կ.Քարտաշյան

Բացող անդամներ՝

1. ---------- Լ.Մարկոսյան

2. ---------- Լ.Առաքելյան